[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.		U	2045636853
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
10	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՍԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (մասնակցությունը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	37200218 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.3	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող՝
պաշտոնը անուն, ազգանունը (անունը, ազգանունը)

պաշտոնը անուն, ազգանունը (անունը, ազգանունը)

10/12/2018 15:23:36

ՈՐՈՇՈՒՄ

դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

03 սեպտեմբերի, 2018թ. ք.Եղեգնաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Գևորգյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 37200218 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. հուլիսի 29-ին Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղում բնակվող Կարինե Վաչագանի Իսրայելյանը ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նախորդ օրը՝ 28.07.2018թ. անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ ամուսինը 3-4 անգամ հարվածել է դստեր՝ Արմինե Գագիկի Բաբայանի մարմնի տարբեր մասերին, նաև 1 անգամ հարվածել է իր դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Բացի այդ, 29.07.2018թ.-ին, ամուսինը ծեծի է ենթարկել իրեն՝ 3-4 անգամ հարվածել մարմնի տարբեր մասերին ու պատճառել ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում տվյալներ են ստացվել այն մասին, որ 21 տարին լրացած անձը Կարինե Իսրայելյանի դստեր, 17.03.2003թ. ծնված Արմինե Գագիկի Բաբայանի նկատմամբ կատարել է անառակաբարո գործողություններ, բացի այդ, ժամանակ առ ժամանակ վերջինիս պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, որը հերթական անգամ դրսևորվել է 2018թ. հուլիսի 28-ին՝ Արմինե Բաբայանին ծեծի ենթարկելով:

2018թ. օգոստոսի 08-ին Վայոց Ձորի մարզի դատախազության դատախազ Կ. Կարապետյանի կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով թիվ 37200218 քրեական գործը հարուցելու մասին: 2018թ. օգոստոսի 10-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար: Քրեական գործն ընդունվել է վարույթ:

Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Արմինե Բաբայանի մայրը՝ Կարինե Իսրայելյանը 2018թ. օգոստոսի 7-ից լքել է Արմինե Բաբայանին, նրա գտնվելու վայրը հայտնի չէ, Արմինե Բաբայանը ժամանակավորապես բնակվում է իր ծանոթի տանը: 2018թ. օգոստոսի 14-ին որոշում է կայացվել Արմինե Բաբայանի օրինական ներկայացուցիչ նշանակել Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ Հովիկ Մնացականյանը:

Նկատի ունենալով, որ անչափահաս Արմինե Բաբայանի ծնողների գտնվելու վայրը հայտնի չէ, նա չունի բնակության վայր, քննչական վարչության միջնորդությամբ նրան սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար Արմինե Բաբայանն ընդունվել է Հայկական օգնության ֆոնդ /ՀՕՖ/ հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ և ներկայումս գտնվում է այնտեղ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Արմինե Բաբայանը ցուցմունք է տվել այն մասին, որ ծնվել Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում, ապրել է տարբեր վայրերում, հոր՝ Գագիկ Բաբայանի մասին ոչինչ չգիտի, նրան չի տեսել, մորը հաճախակի է հարցեր տվել հոր վերաբերյալ, բայց նա ոչինչ չի ասել: Մայրն առաջին ամուսնությունից ունեցել է երկու երեխա, ինքը և եղբայրը՝ Արման Բաբայանը, 10 տարի առաջ նա երկրորդ անգամ ամուսնացել է Նվեր Համբարձումյանի հետ, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են 4 երեխաներ՝ աղջիկներ, մեծը 10 տարեկան է, փոքրն՝ 9 ամսական: Ինքը բնակվել է մոր և նրա ընտանիքի հետ, ունեցել են նորմալ հարաբերություններ, ապրել են տարբեր վայրերում, տեղափոխվել են տեղից տեղ՝ կուտակված պարտքերի պատճառով: Վայոց Ձորի մարզի Մալիշկա գյուղում ժամանակավորապես բնակվել են իրենց ծանոթներից մեկի տանը, ապա՝ վարձակալությամբ: Ընդհանուր առմամբ խորթ հայրը՝ Նվեր Համբարձումյանն, իրեն լավ է վերաբերվել, սակայն վերջին երեք տարիների ընթացքում ինքը նկատել է, որ նրա վերաբերմունքն իր նկատմամբ փոխվել է, նա հաճախակի է իրեն վիրավորել, հայհոյել, իր հասցեին շատ լկտի ու տհաճ բառեր է ասել, դրանցից ինքը միշտ նեղվել է ու լաց եղել: Նվերն իր այդ պահվածքը պատճառաբանել է նրանով, որ իրեն կասկածել է վատ վարք ունենալու մեջ, ասել է, որ չի ցանկանում, որ մի հարկի տակ ապրեք: Դեռ ԼՂՀ Իշխանաձոր գյուղում ապրելու ընթացքում մեկ անգամ Նվերն իրեն ծեծի է ենթարկել, նա այդ ժամանակ տանը վիճաբանել է մոր հետ, ինքը մեջ է ընկել, որ նրանց բաժանի, այդ ընթացքում Նվերը մի քանի անգամ դիտմամբ հարվածել է իր մարմնի տարբեր մասերին, դրանից ուժեղ ցավ է զգացել: 2018թ. հուլիսի 28-ին՝ ժամը 18-ին, Մալիշկա գյուղում ապրելու ընթացքում ինքը և Նվերը գնացել են խանութ, ճանապարհին Նվերի հեռախոսին զանգ է եկել, նա սկսել է սեռական հայհոյանքներով խոսել իր ներկայությամբ, անծանոթ մարդ՝ այդ ժամանակ մոտեցել նրան, ասել, որ կամաց խոսի, ամոթ է, դրանից ինքը վատ է զգացել, ճանապարհից հետ է եկել, նստել է առանձնատան բակում՝ ծառի տակ, տուն չի մտել, հետո երբ բարձրացել է տուն, Նվերը խմած վիճակում իրեն տեսնելով, սկսել է գոռգոռալ, հայհոյել, սեռական բնույթի վատ բառեր է իրեն ասել, պահանջել է դուրս գալ իր տանից, ինքը ցանկացել է դուրս գալ, մայրը չի չթողել, Նվերը դրանից բարկացած սկսել է իրեն խփել, խփել է գլխին ու աջ ձեռքին 3-4 անգամ, մայրը փորձել է նրա ձեռքերից դուրս հանել, նա սկսել է մորն էլ ծեծել, նրան էլ բազմաթիվ անգամ խփել է, նա եղել է հարբած ու անկառավարելի: Այդ ժամանակ ինքը ցանկացել է տանից հեռանալ, Նվերը քաշել է շորից, պատռել այն, ինքը դուրս է եկել տանից, գնացել է իր ծանոթ Ալվարդենց տուն, այլևս տուն չի վերադարձել, քանի որ վախենում է Նվերից, 2018թ. օգոստոսի 7-ին մայրն էլ իրենից գաղտնի երեխաներին հավաքել է ու հեռացել է, իրեն թողել բարեկամի տանը: Նշել է նաև, որ Նվեր Համբարձումյանը ԼՂՀ Իշխանաձոր գյուղում, երկու անգամ հարբած վիճակում տանը գտնվելու ընթացքում, երբ մայրը տանը չի եղել, ձեռքով շոշափել է իր սեռական օրգանները, ինքն ամաչելով ընդամենը ձեռքով հրել է նրա ձեռքն ու անցել, դրանից Նվերը սկսել է ծիծաղել, Մալիշկա գյուղում գտնվելու ընթացքում՝ 2018թ. հուլիս ամսվա ընթացքում, երբ մայրը տանը չի եղել, Նվերը կրկին ձեռքով կպել է իր

սեռական օրգաններին ու պահել ձեռքը սեռական օրգանի վրա, ինքը նրան ասել է, որ թողնի, այլապես մորը կասի, որից հետո նա ձեռքը հետ է քաշել, ասել, որ մորը չասի, քանի որ նա սրտի հիվանդ է պետք չէ նրան դրանով ծանրաբեռնել: Ինքը վախենում է Նվերի հետ համատեղ ապրելուց, նա խմած վիճակում անկառավարելի է և նրանից ամեն ինչ սպասելի է, նա անգամ հնարավոր է, որ իրեն բռնաբարի: Իմ սեռական օրգաններին կպնելուց և շոշափելուց իր մոտ սեռական բնույթի ցանկություններ, գրգռվածություն չեն առաջացել, այդ հպումները ցավոտ չեն եղել, իր համար դուրեկան չի եղել, քանի որ նախ նա իր խորթ հայրն է, բացի դա լկտի ձևով է դա արել, միշտ քմծիծաղ է տվել ու ծիծաղել, նա այդ ամենն արել է միշտ խմած վիճակում, իսկ սթափ վիճակում նման բաներ չի արել, իր նկատմամբ հետաքրքրություն չի դրսևորել, չի փորձել առանձնանալ իմ հետ կամ ավելի մտերիմ շփվել, նա սթափ վիճակում եղել է հանգիստ ու հավասարակշիռ:

Ըստ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի <<Իշխանաձորի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից Արմինե Բաբայանի վերաբերյալ ստացված անձանակն գործի տվյալների՝ Արմինե Բաբայանը թույլ ընդունակությունների տեր աշակերտոհի է, լռակյաց է, ինքնամփոփ և համեստ, պասիվ է եղել համադպրոցական միջոցառումներին:

Հաշվի առնելով անչափահաս տուժող Արմինե Բաբայանի տարիքը, կատարված հանցանքի բնույթը՝ նրա կողմից իր նկատմամբ կատարված գործողության բնույթն ու նշանակությունը հասկանալու հանգամանքը և մի շարք այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտություն է առաջացել քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քր.դատ. օր-ի 243-246-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն:
2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել ներքոհիշյալ հարցերը.

ա) Անչափահաս տուժող Արմինե Բաբայանն ինչպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ ունի:

բ) Հաշվի առնելով անչափահաս տուժող Արմինե Բաբայանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակը, նրա հոգեկան վիճակն ու դեպքի հանգամանքները՝ կարող էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:

գ) Հաշվի առնելով անչափահաս տուժող Արմինե Բաբայանի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, նրա հոգեկան վիճակը՝ կարող էր նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ վերարտադրել դրանք ու քրեական գործով տալ ճշմարտացի ցուցմունքներ:

դ) Անչափահաս տուժող Արմինե Բաբայանին բնորոշ են արդյոք բարձր ներշնչվողականության հատկանիշներ:

ե) Անչափահաս տուժող Արմինե Բաբայանին բնորոշ է արդյոք վառ երևակայությունը:

2. Փորձաքննությանը կատարման համար ապահովել անչափահաս տուժող Արմինե Բաբայանի ներկայությունը:

3. Անհրաժեշտության դեպքում փորձագետի ուսումնասիրության տակ դնել սույն քրեական գործի նյութերը:

4. Փորձագետին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք սույն որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, դրանց պարզաբանումը կմտնի փորձագետի իրավասության մեջ, որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և դրա վերաբերյալ ստորագրությունը կցել եզրակացությանը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Ա. Գևորգյան